ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 6-Ա

"1 "փետրվարի 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ - ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով,ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թվականի հունիսի 2-ի <<Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին>> N102 հրամանով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012թ. հունվարի 26-ի <<Կապանի թիվ 12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 7-Ա որոշման, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1.<<Կապանի թիվ 12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի՝ Անահիտ Ավանեսյանի ընտրության (նշանակման) կապակցությամբ կազմակերպության տնօրեն Ռոբերտ Դավթյանին 2012թ. փետրվարի 2-ից ազատել տնօրենի պարտականություններից:

2.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն	Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Հակոբյան Սուսաննա	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջին կարգի մասնագետ
Հարությունյան Գայյա	Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Ավանեսյան Անահիտ	«Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ տնօրեն (ընդունող)
Դավթյան Ռոբերտ	«Կապանի թիվ12 հիմնական դպրոց»ՊՈԱԿ նախկին տնօրեն (հանձնող)

3.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.փետրվարի 1
ք. Կապան